



ԱՐԴՅՈՒՔ ՊԵՏՔ Է ՀԱՏՈՒԿ ՄՆԵԴԱԿԱՐՔ ՊՇ ԺԱՄԱՆԱԿ

ՊՇ տառապող հիվանդների համար չկան աննդային սահմանափակումներ: Կոլիսիցին ընդունելու դեպքում ցանկալի է բացառել գրեյպֆրուտի հյութը:

ԿԱՐԵԼԻ Է ԶԲԱԴՎԵԼ ՍՊՈՐՏՈՎ

ՊՇ ունեցող երեխան կարող է կանոնավոր զբաղվել սպորտով, բայց չափավոր, որոշակի սահմանափակումներով: Ցանկայի չէ խիստ ֆիզիկական ակտիվությունը, որովհետև բարձր ակտիվությունը և լարվածությունը կարող է առաջացնել հոգնածություն, թուլություն, մկանային ցավ: Երեխան պետք է իմանա, որ եթե նա ունի նման ախտանիշներ, ապա պետք է դադարեցնել զբաղվել սպորտով, որը թույլ կտա կանխել ՊՇ նույնի:



ԻՆՉՊԵՍ ՕԳՆԵԼ ՁԵՐ ԵՐԵՆԱՅԻՆ ՉՏԱՐԲԵՐՎԵԼ ՄՅՈՒՍՆԵՐԻՑ

Ի տարբերություն ավելի լուրջ հիվանդություններից (շնորհիվ բուժմանը հնարավոր է վարել նորմալ կյանք), ՊՇ.

- գենետիկ հիվանդություն է, որը հնարավոր է ժառանգել ծնողներից
- քրոնիկ հիվանդություն է, որ պահանջում է կոլիսիցինի ամենօրյա ընթացում, նույնիսկ նոպաների բացակայության դեպքում

■ անկանխատեսելի հիվանդություն է, քանի որ հիվանդը կարող է տարիներ շարունակ չունենալ նոպաներ, որոնք կարող են հանկարծ նորից հայտնվել տարիների ընթացքում:

Ուսուցիչները պետք է պատշաճ կերպով գնահատեն ՊՇ ունեցող երեխայի իրավիճակը, չկարևորելով այն համեմատաձ մյուս աշակերտների: Ինչպես ցանկացած քրոնիկ հիվանդությամբ տառապող երեխա, ՊՇ ունեցող երեխաները ուզում են, որ նրանց վիճակը մնա զաղտնի, և որ ուսուցիչը չխոսի այս հարցի շուրջ մյուս ախտակերտների առջև:



International Scientific Technological Center

Prospective in Autoinflammation: Genetic and clinical aspects of hereditary periodic fever syndromes

Scientific Workshop, 9-12 May 2015, Yerevan, Armenia

Organized by:



Center of Medical Genetics and Primary Health Care
Department of medical genetics of Yerevan State Medical University
Armenian Association of human genetics

f. Երևան, 0001, Արսլանյան փող. 34/3
Հեռ.՝ (+374 10) 54 43 67,
Ֆաքս՝ (+ 374 10) 54 43 66

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ, ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԻՆՉ Է ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ՏԵՆԴ ԿԱՄ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանեկան միջերկրածովյան տենդը, կամ պարբերական հիվանդությունը (ՊՀ) ժառանգական հիվանդություն է, որը տարածված է միջերկրածովյան տարածաշրջանի բնակչության՝ հայերի, արաբների, հրեաների, հույների, թուրքերի, իտալացիների մոտ: Հիվանդությունը դրսևորվում է պարբերաբար առաջացող նոպաներով, որոնք ուղեկցվում են բարձր ջերմությամբ/տենդով, որովայնի և/կամ կրծքավանդակի շրջանի ցավերով, մկանացավերով, հոդացավերով/հոդաբորբով և տևում են մեկից մինչև մի քանի օր: ՊՀ ախտանշանները նման են վիրուսային վարակների, գրիպի, իսկ ավելի լուրջ դեպքերում՝ որովայնի օրգանների սուր վիրաբուժական հիվանդություններին: Եթե ՊՀ չախտորոշել ժամանակին և չբուժել, ապա կարող է զարգանալ ՊՀ ծանր բարդություն՝ երիկամային ամիլոիդոզ, երիկամային անբավարարություն, որոնց ժամանակ ցուցված է դիալիզ, երիկամների փոխպատվաստում: Ճիշտ ախտորոշումը, դեղորայքային բուժումը կոխիցին դեղամիջոցով և բժշկի հսկողությունը կօգնեն կանխել երիկամային բարդությունների զարգացումը և հիվանդության կլինիկական դրսևորումները:



ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ԴՐՍԵՎՈՐՎԵԼ ՊՀ ՆՈՊԱՆ

Սովորաբար ՊՀ նոպան սկսվում է ընդհանուր թուլությամբ, ախորժակի բացակայությամբ, մարմնի ջերմաստիճանի բարձրացմամբ, որոնք ուղեկցվում են որովայնային և կրծքավանդակի շրջանի սուր ցավերով, հոդացավերով: Այն կարող է սկսել ցանկացած ժամանակ, առանց ակնհայտ պատճառի, և ամեն անգամ տեղի է ունենում տարբեր ձևերով:

Նպաստող գործոնները՝ սթրեսը, քնի պակասը, ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

ԵՐԵԽԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ԵՎ ԴՊՐՈՑՈՒՄ

Պարբերական հիվանդությամբ տառապող երեխաների մեծամասնությունը կանոնավոր բուժում ստանալու դեպքում վարում է նորմալ կյանք, սակայն որոշ երեխաների մոտ նոպաները կարող են պարբերաբար կրկնվել:

Ծնողները տարբեր կերպ են արձագանքում իրենց երեխայի հիվանդության և կրկնվող նոպաների առկայությանը: Ոմանք, չնայած տենդին, ուղարկում են իրենց երեխաներին դպրոց, մյուսները՝ հիվանդության ախտանիշների աննշան դրսևորման դեպքում նախընտրում են պահել նրանց տանը:

ԱՐԴՅՈՔ ՊԵՏՔ Է ԴԵՂՈՐԱՅՔԸ ՏԱՆԵԼ ԴՊՐՈՑ

Կարիք չկա: Անհրաժեշտ է կոլխիցինի ամենօրյա ընդունում, և ցանկալի է միևնույն ժամանակ: Տարիների ընթացքում հիվանդները կարողանում են կռահել նոպայի սկիզբը, և հաճախ երեխայի վիճակը թեթևացնելու նպատակով բժիշկները նշանակում են հակաբորբոքային և անալգետիկ դեղամիջոցներ (իբուպրոֆեն, պարացետամոլ): Պետք է տեղեկացնել ուսուցչին երեխայի հիվանդության մասին; եթե երեխայի վիճակը դեղորայք ընդունելուց հետո չի բարելավվել, ապա անհրաժեշտ է տեղեկացնել ծնողներին:

ՔՈԼԵԶՈՒՄ / ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՊՀ տառապող հիվանդների մոտ, որոնք ամենօրյա ընդունում են կոլխիցին, և որոնց վիճակը համեմատաբար կայուն է, առանց նոպաների, մի երիտասարդ տարիքում, երբ պայմանները փոփոխվում են, օրինակ, քոլեջ գնալու ֆոնի վրա, հոգնածության կամ գերլարվածության ժամանակ, կարող են զարգանալ նոպաներ: ՊՀ նշանները (որովայնային ցավ, ընդհանուր թուլություն) նման են դպրոցականների վիճակին ստուգողականներից առաջ: Դա փոխում է իրենց վարքը դպրոցում և բերում է սոցիալական մեկուսացման: Նրանց ծնողները պետք է ակտիվորեն շփվեն ուսուցիչների հետ, ապահովելով բարենպաստ պայմաններ սովորողների համար, առանց նրանց բարոյապես ճնշելու:

